

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

«ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածից «արժեթղթավորման հիմնադրամների գործունեության դադարեցման, սնանկության, լուծարման,» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի քսաներկուերորդ պարբերությունը «սույն օրենքին» բառերից հետո լրացնել «, «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին» բառերով:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում «սույն օրենքով» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով» բառերով:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 18-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 18. Արժեթղթավորման հիմնադրամի գրանցումը

1. Արժեթղթավորման հիմնադրամի գրանցման և գրանցումն ուժը կորցրած ճանաչելու կարգը և պայմանները սահմանվում են բացառապես «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Այլ օրենքներով գրանցման կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ այլ դրույթներ սահմանված լինելու դեպքում արժեթղթավորման հիմնադրամների համար գործում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:»:

Հոդված 6. Օրենքի 19-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 39-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 39. Արժեթղթավորման հիմնադրամի լուծարումը

1. Արժեթղթավորման հիմնադրամի լուծարման հիմքերը և կարգը սահմանվում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:»:

Հոդված 8. Օրենքի 40-42-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո: